

Յասմիկ Ստեփանեան, Գէորգ Բամպուքեան. Կեանքը, Գործը եւ ժամանակը (1923-1996), «Մեսրոպ Արք. Աշճեան Մատենաշար 178», Երեւան, 2018, 168 էջ:

ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի վաստակաշատ աշխատակցուհի Յասմիկ Ստեփանեանի ոչ-այնքան ծաւալուն բայց բաւական բովանդակալից այս նոր աշխատանքը լաւագոյնս ներկայացնում է պոլսահայ բազմերախտ բանասէր, մատենագէտ եւ թարգմանիչ Գէորգ Բամպուքեանի (1923–1996) կեանքը եւ գործը: Հատորեակը, որ մեծ գիտնականի վաստակի արժանի գնահատանք է եւ նրա յիշատակի խնկարկում, կարելի է յատկապէս հայաստանեան գիտական եւ ընթերցող լայն հանրութեան համար, քանի որ հայրենի գիտութեանը ծանրակշիռ նպաստ բերած բազմարդիւն այս ուսումնասիրողի անունը գրեթէ յայտնի չէ մայր Հայրենիքում:

Իսկապէս, ինչպէս ցոյց է տալիս գրախօսուող աշխատանքը, վիթխարի է Բամպուքեանի գիտական վաստակը: Նա հեղինակ է հազարի չափ հայերէն եւ թուրքերէն յօդուածների, հետազօտութիւնների եւ հրապարակումների, որոնք վերաբերում են հայագիտական ու թուրքագիտական տարբեր խնդիրների՝ բանասիրութեան, պատմագիտութեան, մատենագիտութեան, աղբիւրագիտութեան եւ այլ ոլորտների:

Ստեփանեանը չի յաւակնել կատարել Բամպուքեանի ժառանգութեան գիտական ուսումնասիրութիւնը, այլ ստեղծել *«հանրամարտչելի ուղեցոյց... թուրքագէտների եւ հայագէտների, մասնատրապէս Օսմանեան Կայսրութեան, Արեւմտեան Հայաստանի պարմութեամբ զբաղողոյների համար»* (էջ 6): Դա նրան լիովին յաջողուել է:

Բամպուքեանի համառօտ կենսագրականը ներկայացնելուց յետոյ, Ստեփանեանն առանձին գլուխներով անդրադարձել է գիտնականի թուրքերէն եւ հայերէն ուսումնասիրութիւններին: Բամպուքեանը հարիւրաւոր թուրքերէն յօդուածներ է տպագրել մէկ տասնեակից անելի թուրքական հանրագիտարաններում եւ մի շարք մասնագիտական պարբերականներում: Այդ յօդուածներից շատերը հաւաքուել են եւ գիտնականի անձնական հարուստ դիւանից քաղուած բազում վաւերական նիւթերի հետ միասին, նրա մահից յետոյ, Ստամբուլի «Արաս» երկլեզուայ (հայերէն եւ թուրքերէն) հրատարակութեամբ լոյս են տեսել չորս ստուար հատորներով (2002–2003): Այստեղ ընդգրկուած յօդուածներում Բամպուքեանը հիմնականում հայկական եւ թուրքական աղբիւրների հիման վրայ հմտօրէն քննել է Կոստանդնուպոլսի պատմութիւնը, ներկայացրել հայատառ թուրքերէն գրականութիւնը, որոշ կարելիք աղբիւրների իր կատարած թուրքերէն թարգմանութիւնները, վեր

հանել Թուրքիայի պատմության եւ մշակոյթի տարբեր բնագաւառներում հայութեան կատարած ծանրակշիռ ներդրումները, այդ ասպարէզում հանդէս եկած հազարաւոր հայազգի գործիչների կենսագրականները:

Գրախօսուող ուսումնասիրութեան մօտ եօթ տասնեակ էջերում հայատառ թուրքերէն գրականութեանը եւ Օսմանեան Կայսրութեան պատմութեանը լատեղեակ հեղինակը քննել է Բամպուքճեանի թուրքերէն աշխատանքների քառահատորը եւ ընթերցողին ներկայացրել դրանց պարունակութիւնը, գիտնականի շրջանառած հարուստ տեղեկատուութիւնն ու սթափ քննութիւնները, եզրայանգելով, որ «*յօդուածներից իրաքանչիւրն իր նիւթով ու բացայայտումներով ներդրում է թուրքագիտութեան մէջ*» (էջ 20):

Առանձնակի յիշատակելի են Բամպուքճեանի այն թուրքերէն ուսումնասիրութիւնները, որոնց մէջ նա բացայայտել է շուրջ 500 թուրքագիր աշուղների հայկական ինքնութիւնը, «*նրանց ժառանգութեան հայկական մշակոյթի մաս կազմելու փաստը եւ դրանց թուրքացման ձգտումներին խոչընդոտելու մասնագէտի ազնիւ մղումը*» (էջ 37):

Բամպուքճեանը, որ քաջատեղեակ է եղել պատմական իրողութիւններին եւ միաժամանակ եղել է անաչառ գիտնական, դժուարին հոգեկացութեան մէջ է գտնուել՝ գործելով թուրքական միջավայրում, որտեղ միտումնաւոր կեղծուել եւ կեղծում են պատմական փաստերն՝ իվնաս հայերի: Այդ խեղաթիւրումներն անպատասխան չի թողել նա, եւ Ստեփանեանը զարմանքով ու հիացմունքով է գրել. «*Ինչպէ՛ս է կարողացել այդ առաջին հայեացքից համեստագոյն գիտնականն այդքան համարձակ հակահարուած տալ հակահայ յօդուածներին եւ իրապարկումներին*» (էջ 8): Այա անելացրել է, որ Բամպուքճեանի «*սեղմ, զուսպ գրչով, գիտական ու պատմական անհերքելի փաստարկներով ի չիք են դարձուել կանխամտածուած յարձակումները, յերիտանքներն ու հակահայկական մթնոլորտը շիկացնելու ձգտումները*» (էջ 45): Յիրափ, մեծ գիտնականը «*կանխել է մեր մշակոյթի, պատմութեան շուրջ մտացածին գործերի, խեղաթիւրումների թուփ աճը*» եւ «*տարիներ շարունակ զսպաշապիկի դեր է կատարել թուրքամոլ օտար եւ թուրք գիտնականների համար*»: Աւելին, նա իր աշխատանքներով, թէ՛ նշանակալից ներդրում է կատարել թուրքագիտութեան մէջ եւ թէ՛ նպաստել «*հայ եւ թուրք մշակոյթների կամրջմանը*», որի շնորհիւ նա, իսկապէս եւ արժանիօրէն, «*ծայրաստիճան յարգուած է եղել ոչ միայն հայ, այլեւ թուրքական գիտական շրջանակներում, ունեցել թուրք աշակերտներ, որոնք տիրապետելով հայերէնին, այսօր յայտնի անուններ են թուրք գիտական շրջանակներում եւ մասամբ զբաղում են հայագիտութեամբ, հպարտութեամբ յիշելով իրենց ուսուցչին*» (նշուած էջերը):

Յասմիկ Ստեփանեանն, առաւել սեղմ, անդրադարձել է Բամպուքճեանի հայերէն գիտական ժառանգութեանը եւ ըստ արժանւոյն գնահատել այն: Այդ հարուստ ժառանգութեան մէջ առկայ են մենագրութիւններ, ուսումնասիրութիւններ, յօդածներ, որոնք «*Նաեւ Բամպուքճեանական երախտագիտութեան զգացումների արտայայտութիւններ են՝ ուղղուած առանձին մտաւորականների, հասարակութիւնների, ինչպէս Մխիթարեան վանքերի վարդապետներին, երեսնեան Մարենադարանին եւ այլոց*» (էջ 95): Յիրափ, Հայ եկեղեցու եւ մշակոյթի ուսումնասիրման առումով կարեւոր ներդրումներ են յատկապէս Յակոբ Նալեան Պատրիարք 1706–1764. Կեանքը, Գործերը եւ Աշակերտները (Իսթանպուլ, 1981) եւ Յովհաննէս Պատրիարք Կոլոյր (1678–1741) եւ Իր Աշակերտները (Իսթանպուլ, 1984) մեծարժէք մենագրութիւնները: Ինչպէս նշել է Ստեփանեանը, «*ահռելի փաստական նիւթ է ամբարուած այս մենագրութիւններում, որը մեր ժողովրդի պատմութեան շարք ու շարք անյայտ էջերի վրայ լոյս է սփռում, բազմաթիւ նոր մանրամասներ ի յայտ բերում: Փաստական հարստագոյն նիւթ, որը կարող է աղբիւր ծառայել միջանի լուրջ ուսումնասիրութիւնների համար*» (էջ 86):

Հատորեակում յիշատակուած են նաեւ Բամպուքճեանի հմտալից աղբիւրագիտական, բնագրագիտական աշխատանքները, որոնց մէջ առանձնանում է յատկապէս Երեմիա Չելեպի Քէօմիլճեանի Պատմութիւն Հրակիզման Կոստնդնուպօլսոյ երկի նրա աշխատասիրած քննական բնագիրը (Իսթանպուլ, 1991): Առհասարակ Քէօմիլճեանը, որ թողել է հայերէն ու թուրքերէն չափազանց հարուստ ժառանգութիւն, եղել է Բամպուքճեանի նախասիրած հեղինակը: Վերջինիս ամենանշանաւոր երկերից մէկը՝ Պատմութիւն Սկամպօլայ չափածոյ պատմութիւնը նա թուրքերէնով խմբագրել եւ հրատարակութեան է պատրաստել (Իսթանպուլ, 1988), թուրքերէն յօդածով ներկայացրել է նաեւ Քէօմիլճեանի միւս նշանաւոր երկը՝ Պատմութիւն Համաոփ ԴԾ (400) Տարոյ Օսմանցոց Թագաւորացն նոյնպէս չափածոյ մեծարժէք երկը, «*որն Օսմանեան կայսրութեան պատմութեան մասին առաջին հայերէն գործն է*» (էջ 26):

Յակոբ Նալեանից եւ Յովհաննէս Կոլոսից բացի, Բամպուքճեանը նպատակ է ունեցել գրել նաեւ երկու այլ նշանաւոր պատրիարքների՝ Պողոս Կաղզուանցու եւ Գրիգոր Շղթայակրի մասին մենագրութիւններ: Այդ աշխատանքները, սակայն, նա չի հասցրել իրագործել: Գիտնականի անձնական դիւանում առկայ են բազմաթիւ անաւարտ եւ անտիպ գործեր: Գրախօսուող հատորեակում Ստեփանեանը նշել է Բամպուքճեանի այդ գործերից 27ը, որոնց մէջ կան տապանագրերի, ծեռագրերի, հնատիպ գրքերի, մամուլի եւ բազմապիսի վաւերագրերի ընդարձակ ցուցակներ,

նշանատր անձանց կենսագրականներ եւ գերդաստանների պատմութիւններ, զանազան հետազոտութիւններ եւ թարգմանութիւններ:

Ստեփանեանը տեղեկացրել է նաեւ, որ Բամպուքճեանի հայալեզու տպագիր եւ անտիպ գործերի մեծ մասի ցուցակը խնամքով կազմել է Կարօ Աբրահամեանը: «Հայերէն աշխարասիրութիւնների ցանկը,- գրում է նա,- «Մարմարա»ի կարծիքով, կարող է լրացուել յետագայ ուսումնասիրողների կողմից» (էջ 99): Նշենք, որ մեր բանասիրութեան համար չափազանց շահեկան է կազմել եւ հրատարակել Բամպուքճեանի հայերէն թէ թուրքերէն աշխատութիւնների լիակատար մատենագիտութիւնը, ինչը, ըստ իս, կարող են լաագոյնս համատեղ կատարել Աբրահամեանը եւ Ստեփանեանը:

Հատորեակի վերջում հեղինակը զետեղել է որոշ ուշագրաւ նիւթեր, ինչպէս՝ իր եւ Արմէն Տէր Ստեփանեանի նամակագրութիւնը Բամպուքճեանի հետ, վերջինիս մասին պատմաբան Սիրվարդ Մալխասեանի խօսքը, տեղեկութիւններ արդի պոլսահայ պատմագրութեան, այլեւ արտասահմանում գործող պոլսահայ մի շարք դէմքերի վերաբերեալ: Կարեւոր է նաեւ գիրքը եզրափակող ցանկը, որտեղ նշուած են Բամպուքճեանին վերաբերող հայերէն եւ թուրքերէն յօդուածներն ու գրախօսականները:

Իսկապէս, Բամպուքճեանը կատարել է գործեր, որոնք, Ստեփանեանի գնահատմամբ, «մի ողջ ինստիտուտի աշխարանք էին ենթադրում», եւ, այդուհանդերձ, «նա նոյնիսկ չարժանացաւ ՀՀ ԳԱԱ արտասահմանցի անդամի կամ պատրաստուող դոկտորի կոչման» (էջ 5-6): Բամպուքճեանն ինքը գիտութեան ասպարէզում օժանդակել ու սատարել է շատերին, եւ, ինչպէս արձանագրուած է նրա շիրմաքարին, նա «**իր անձէն աւելի ուրիշներուն ծառայեց**» (էջ 113):

Ստեփանեանը մաղթում է, որ «ի վերջոյ իմի հաւաքուի ու մշակուի յայրնի բանասէր, մարենագէտ պատմագրի արխիւը: Հրապարակուեն նրա անտիպ ուսումնասիրութիւնները, իսկ թուրքերէնները՝ թարգմանուեն ու տպագրուեն Գէորգ Բամպուքճեանին նուիրուած հապորներում» (էջ 112): Միանում ենք այդ մաղթանքին՝ լիայոյս, որ հայ գիտնականների ջանքերով պոլսահայ վաստակաշատ բանասէրի ժառանգութիւնն ի վերջոյ կ'ամբողջանայ եւ մատչելի կը դառնայ սերունդներին:

ՇԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆԵԱՆ

helinemuradyan@rambler.ru